

ԳՐՈՒԱԾԻՔ (ազգանունը քերած)
Ս. Պ. ԲՈՒՐԳԻ.

Դործ հանդուցեալ Միքայէլ Նալբանդեանցի
Բանտարկութեան մէջ.
Ընդէմ Վարդենիք անուամբ գրքոյկին
Խորէնի Գալֆայեան
Թէսդոսիայ:

ԱՂՅՄԻՔ

«Je veux montrer à mes semblables un homme dans toute la vérité de la nature».

J. J. Rousseau (Confession).

ՈՒՂՅՐՁ

«Compte rendu!»

Որում Խորէն հանապաղ
Լարակտուր և քնարին
Վարդենեաց ոչինչ նիազ
Գողտրիկ անդրածայնութիւն:

ԱՌ ԸՆԹԵՐՑՑՆԵԼԻՄ

«Je ne veux pas passer pour meilleur que
je ne suis».

J. J. Rousseau Nouv. Heloise

«Non, mes amis, non, je ne veux rien être...
De mon berceau près de benir la paille
En me créant Dieu m'a dit ne sois rien».

Béranger.

Զայս մի և եթ կանխեմք աղաչել, զի մի ոք համարեսցի
եթէ և մեք առ հայկաբանս կամ առ քերթօղս զանձինս գրի-
ցեմք. քաւ լիցի մեզ; Դուզնաքեայ ոք, այր մի տառապեալ,
խոստովանիմք, այլ՝ սպաս արարեալ ճշմարտութեան, ոչ երբէք
զանձինս ունիմք առ որ չեմք, և ոչ երբէք:

Ընդէ՞ր իսկ բնաւ և մաղթանք՝ մի որոց աչս ունիցին
տեսանելով ոչ զդոյն գուշակիցեն, անդէն իսկ ի վերծանու-
թիւն մատուցեալ Սաղու արդար իսկ արժանի. միթէ ամենայն
որ կաղակրկին կակազէ, լիցի ի բարբառ գրգարանին, հայկա-
բան իցէ, կամ որ չափաւն՝ քերթնդ. «Եւ Սաւուղ ի մարգա-
րէս», որպէս ասեն Դիբք:

Քաւ, և մի լիցի, ասեմք և կնքեմք, այլ զդիպողն առանց
բնաւ թանգուզանաց, արդինաւոր ճշմարտութեամք և ի փոր-
ձոյ՝ զպատասխանին ճանեցուցանեմք. ոչ բազումք լիցեն, քան
եթէ սակաւք, զի առ ծանր թեթեռութեան անձամք զանձինս
յանդզնեցուցանեն, մինչև, թէ տայր ոք, զբազմերախտ և զա-
ռաքելանման մերոց թարգմանչաց զգահուց բուռն հարկանել:
Սակաւք իցեն առ մեզ, օրէն լիցի հարցանել, որ ի չափս ինչ
արուեստակեալս զհողմս արածեալ միանդամ, զՇեքսպիրի կամ
զՇեկվերի լրբին թեկն ածել, որոց և ոչ իսկ համբակացդ ան-
լուայից ստղիւտ թերես ի ճահ:

Եթէ փութացաք ուրեմն քաւիլ յայդպիսեաց՝ թուի մեզ
թէ և ոչ իւկը ինչ զթեցաք:

Նաև իսկ իցէ մեզ, ստուգութեամբ ասեմք, և կարի շատ,
եթէ զանձինս ի նախադրունս անդ համարձակեցուցուք գիւ-
տութեան լեզուիս, զոր յերկնից արդեօք հրաման տայր ուսա-
նել Քաջարանցն Արամ: Թող զքերթողականին վսեմ ճարտա-
րութիւն, որով սակաւք յոյժ, քան եթէ բազումք, խիլային ի
բնութենէ՝ աստուածային գործես կայծակամբք ջահաւորեալ,
ըստ որոյ՝ եթէ այլոցն միայն քերթօղաց—հսկայից խելամուտ
կարասցուք լինել սխրալի վաստակոց, արդէն երանելի զմեզ
համարիմք:

Ա.

ԱՐԱՀՈՏՈՒՅՑ

Այգուն այգուն
Ի բուրաստան շուշանաց
Թափեալ զքուն
Կոյսն իջանէ մաքրազգեաց...
Զերթ թիթեռնիկ
Թոռւցեալ ծաղկանց ի ծաղկունս
Քաղէ վնջիկ
Թացեալ ի ցօղ զմատունս:
Զի՞ գեղեցիկ,
Զի ընդ առաջ յայգորել
Բերի յուշիկ,
Եւ զվարդունս համբուրել
Սիրատոչոր
Եւ սրտացեալ հրեշտակ,
Եւ ի բոսոր
Վառի կուսին պերճ դիտակ,
Համբոյրք խաղան...
Եւ ի վանդակս կրծոց
Սիրոք թոթուան
Բի՞ւր երանի արդարոց.
Վճիտ ի սէր՝
Զոր ցանդ և գիր պատուիրէ,
Հրեշտակն մեր
Սիրէ զկոյսն ի սրտէ:
Եւ ի ծաղկանց
Համասպրամից՝ թոյր ի թոյր,
Քնքուշ մատանց
Կաղմեալ պսակ բազմաբոյր.

Արտացելոյն
 Վառեն զճակատ և հնչէ
 Նդրօրորդւոյն
 Քնար. ւ'աղաւնեակն զի մնչէ...
 Եւ ի թաւուսս
 Սաղարթախիտս պարտիզկան
 Ընդ առաւոտս
 Կանխեն ամոլը միաբան
 «Ո՞ պատմեսցէ
 Զօրոց սիրոյն հանեն ձօն»...
 Կ Ա Մի մեղիցէ.
 Նոցա՝ անսէրն անկրօն:

Բ. ԱՆՑՀՀ

Ընդ լերինս ալպեան սահեալ
 Անցանեմ ի Գաղղիա.
 Ցրտահար և տուայտեալ
 Անփառազեղ՝ գամ, գոնեայ,
 Եւ ծխին յոտն լերին
 Մեքենայք որ և սուլեն
 Ուղեորք խուժին խոնին
 Ի կառս կառս, և ճեպեն:
 Ի Փարի՛զ, ո՛ր, ի Փարի՛զ,
 Յազատութեանն յորորան,
 Ի սնւլը սիրոյ հայրենիս՝
 Ուր պա՛ր յաւէրժ և խրախճան,
 Ընդ քարշ տանիմ զոսկերս իմ՝
 Մաղապուր խղեալ զկապանս,
 Հանդուցանել յաղքատին
 Ի մերայոց օթևանս:
 Tiens! կացեալ առ դուքս տան
 Զայնէ առիս նուիրակ,
 Եւ ես, յանդէտս ի մթան,
 Կարեմ զուղին խոտորնակ...
 «Par ici, monsieur, par ici!!...»
 (Cinquante six, rue Richelieu)
 —Hein! qu'est ce qu'il y a donc?..
 Merci!!

«A la choix!!... s'il vous plaît!!...»
 Այլ ես ի զէն յասպազէն
 Վառեալ սիրոյ երկնային
 Թափուր զնաղփս առ դնեմ
 Լարեալս ինձ և թուչիմ,
 Ի մենացեալն Դրընել՝

Ուր եղբայր ցանդ ինձ մնայլը,
Ուր սուրբ էին մուտ և ել՝
Եւ սէր իսկ ոչ հնանայր:

Գ. ՀՐԾՇՏԱԿՆ ԱՂՕԹԻՑ:

Որ բնաւ ի տաճարս
Ոչ բնակիս ձեռագործ,
Որոյ են երկինք աթոռ
Եւ երկիր կայ ընդ աթուր,
Հաճեցար զանուն Քո
Կոչել ի վերայ մատրան,
Ի վերայ մեր այս տան՝
Յար բնակին որդիք Քո:
Արբութեան կանոնեցաւ
Սեղան Տեառնդ ընդ հարաւ,
Որդւոյդ առ յիշատակի
Հաց և գինի Քեզ մատչի.
Ո՞չ գաս ի հարաւոյ
Ո՞չ սուրբդ ի Փառան լիռնէ.
Մարգարէն զայս ասէ,
Շարժեալ ի Քումմէ Հոգւոյ:
Կարկեցան և ժանտից
Բերանք, լեզուք թունալից
Մինչ ընդ որբոյն ներսիսի
Տօնեցաք զՊրիգորի:
Եւ դաշնակն ¹⁾ հրաշաձայն
Յաներևաթս սրովրէից
Օրհներդուաց երգակից
Գտաւ Քեզ-յերեցրեանն.
Հայեաց, Տէր, ի ծառայս,
Եւ մի յիշեր զանուղղայս,
Աջ Քո լիցի ի նոսա
Այլ ի չարէն զիս փրկեան,
Զորդի Քո աղախնոյ
Ում սիրս ետուր սիրալիք
Եւ զուրբ խաչ ի կիր
Զնշան Որդւոյ մարդոյ:

¹⁾ Յայսմ և ի սոյն միայն ներեմք մեզ, և այն ոչ ան-խորհրդաբար, որպէս թէ կամեցեալ ասել «քոյդ ցքեղ», կիրա-սութիւն բառիդ ըստ այդմ առման, զոր այլուր մերժեմք իս-պառ, որպէս կամամտածական բռնազբօսութիւն լեզուիս.

Պ. ՏԵՂԻ ՏԱՆ ՏԻՇՈՒԽԻՒԽՆՔ

Ընդ վարսագեղ ծառողի նստեալ հառաջէր
 Այն ինչ տակաւ տիմ զգիշեր հալածէր,
 Եւ թռչնակաց հոյք համակեալ ի գեղգեղս
 Բիւր դայլայլիկս յօրինէին քաջնամեղս.
 «Եւ զի՞ է քեզ, ասեմ ցկոյսն, համակիլ
 Ցանդ ի թախիծ, և ուստի քեզ վարակիլ
 Յախտ անծանօթ, յորմէ կայիր ցարդ անփորձ,
 Մի՛ թշնամի՛ Աստուած ի քեզ զայդ ելոյց»:
 Զայս առ կոյսն, և զնորա իրանաւ
 Պարապատեալ թաւալիմք առ վարդենեաւ
 Ի դալարիս, յոր երկինք զեռ ցողէին.
 Եւ ձեռք քաղուսք սրտի կուսին պատահին:
 Այլ խուն ի վեր ամբարձեալ անդր զաջ ի խանդ
 Զնախանձոտ լուծանեմ կուռ զճարմանդ,
 Եւ անդրանիկ ցոյք նշուլից արեռւն
 Ի ստեանց կուսին արտափային գոյն ի գոյն:
 «Քանի՞ վսեմ, զի՞ վայելուչ, մեծ ես, Տէր,
 Սիրոյդ ի շունչ որ զտիեզերս առլցեր.
 Եւ ժպրհեցի՞ ստգիւտ դնել ի գործ քոյ
 Որդնն չնշն, բանիւ անդուռն բերանոյ»:
 Յորդան կարմիր ի շրթանց լարս կուսանին
 Ժալիտ փայլի, յայտս գոհար վարդք վառին,
 Հաւատարիմ մնայ սակայն լոռութեան...
 Ես իմ անդէն.—Եթէ ոչ սուրբ ընութեան:

Ե. ՕՐՀՆԵԱԼ ԼՀԹԻՍ ՔՈՌԾՈ

Սիրտ քո օտար լիցի, մվ կոյս,
 Ընդ վայրայօն պշանաց,
 Որոց բախեն՝ բաց զքո դուրս,
 Մի՛ մերժեսցի ոք ի բաց,
 Եւ ընդ յարկաւ քո խորանին
 Ասպնջական թէ գտցիս
 Սիրատենչակ կրեալ հիգին,
 Յաւիտետն օրհնեալ լիցիս,
 Թէ ոյը չիցէ գլխոյն տեղի
 Եւ դու նմա զքո բարձս...
 Թէ կորացեալ գլուխ գգուի...
 Զգեալ ի քէն զնոր կեանս,
 Տաղաւարիդ Արքահամեան
 Ի Մամրէի կաղնւոյն ցից
 Օժտեսցէ միշտ Ամանորայն
 Եաւիտեան օրհնեալ լիցիս:

Թէ սիրակէղ հէդ ծարաւոյ
 Ընդ ծագ պատղանն ջաւը խնդրել
 Նահապետին ի Յակոբու
 Զրհորոյդ դու տաս ըմպել,
 Կրկնավտակ աղքերակիդ
 Յանոյշ վիճակս հրճուեսցիս
 Եւ մի կացցէ ակնդ վճիտ՝
 Յաւիտեան օրհնեալ լիցիս:
 Մատաղերամ հէդ այգորդաց
 Եթէ զայգիդ տաս ի գործ,
 Եւ գաստակոցն արդեօք քրտանց
 Բերես առնուլ գքաջ փորձ...
 Սիրողապէս թէ ուղղեսցիս
 Յամրոյր տիգեալ խաւարծիս՝
 Բուն քեզ բուսցի միշտ քաջապէս,
 Յաւիտեան օրհնեալ լիցիս:
 Ակեալ ումեք վարդիցդ ի հայց,
 Դու՝ որպէս մայր գթութեան,
 Տաս և զոյս գթթեալ նուանց,
 Եւ մածեալ լեռնակողման
 Առաջնորդես այգույդ գինոյն
 Ի կենսարաշխ խառնելիս՝
 Զա՞փ քեզ ի գոդ տացի շարժուն,
 Յաւիտեան օրհնեալ լիցիս:

Զ. ՄՈՒԴՊԱՇՏՀՆ ՑԱԶՀ

«Celestial Dian, goddesse argentine,
 I. will obey thee»
 Ihakspeare. Pericles, prince of Tyre.
 Act. v. scene.

«Որոց սիրեն զիս
 Ընուն ի յերկինս
 Ի վեր քան զարեն
 Գրեսցի ինն
 Նա, կոյս սիրասուն
 Որ գհէզն անտուն
 Զօնեալ յիւր ի սէր
 Պաշտէր յանձնանձէր,
 Աւանիկ ահա
 Ընդ երկինս սիգայ,
 Յաստեղացն ի պար
 Զահեալ բոցավառ...
 —Զի՞նչ անուն նորա, —
 Հարցանէ ցնա

Զո՞ն թակարդեալ.
 —Կամ զի՞նչ նորա փայլ?
 «Առնաշափ ահա
 Ի վեր բարձրանայ
 Եզերացից սահեալ
 Ընդ մէդ ընդ մոայլ,
 Աստղիկ վեհափառ՝
 Արուեակդ փարփառ,
 Կոչէր առ նախնեօք,
 Եւ պաշտէր բագնօք:
 Իսկ գքեզ, ով կոյս,
 Շուշան դեռաբոյս,
 Ի լուսին կարգեմ
 Սխրացուցանեմ,

Ընդ Ուսկիամօր
Տիկնոջն երկնաւոր
Պաշտեալ առ նախանիս
Յողջոյն աշխարհիս.
Խնկեմ զանուն քո
Երգեմ զսէր քո
Բամբուան ի լար
Կնտնտցանար
Որմիզդ իսկ յերկինս
Կացցէ ի յակճիռս...
Սիայն թէ յազես,

Յոր ցանդ ըղձամ եռա...
Նւ շօշափեցա՞ն
Սորինք կուսական,
Ծիրանէծաղիկք
Լուծան կուսութիւնք,
Մոզպաշտէն վազիւ
այ զմատենիւ,
Յոր գրէ զկուսին
Անուն ի լուսին:
Սիայն թէ յազես,

Բ. ՀԻՄԷՇ, Ո'Վ ԿՈՅՑ: ¹⁾

Եւ յԱրուսեկին
Զոր թաւուտք գգուեն
Յախտարծարծ լերին
Ի թաւալոցէն,
Հրեշտակին մատունք
Սահին դիւրաշուրջք,
Ընդ կմրայն կայտառ
Երթանցն ի ծրար:
Ի լրթանց փաքունց
Ի յաւէրժհարսանց,
Պարզեալ դիւրալիյժ
Մնդուն գեղապանծ
Ունի. զտաճարին
Զմուտ խորանին
Քարնզ պարծանաց
Կուսից ամօթլեած:
«Հիմէն, ով դու կոյս,
Եւ պահեալ անխախտ
Լեր ինձ կենախուզ
Կամ զինքեալ դրախտ

Յողացք բանալ
Բարձր ի գուլիս սիզալ,
Յանմատոյցն յալլոց
Մտեալ հաւալոց:
Յիս, կոյս, յիս ցողեան
Կուսութիւնս առատ
Նորոյդ Սանիրայ
Զուղիս անարատ,
Լիցի ի թերափ
Իսկ խարամանուոյն՝
Բաժակ մահաթոյն»...
Եւ հնձանահար
Թաթաւեալ զձորձս
Ի բոսոր պայծառ
Տաճարին ի մուտս,
Գայ որպէս փեսայ,
Նազի և ցնծայ.
Իսկ խարամանին».
—Ողբայ ցաւագին:

Թ. ԱՅՑ Հ ՀԱՆԳԻՍՏ ԻՄ

Ո'րպէս գգուէ բնութիւն զարկ
Յետ անձրեաց, յետ բըոյն.
Ո'րպէս զարթնու թօշնեալ տերկ
Ի ցող զուարթ յետ տապոյն.

1) Յաւօք սրտի պէտք է տաենք, որ 7 րդ գլուխ բնագիրը
տպարանում կորած լինելով՝ անկարող ենք տպել ԽՄԲ.

Ո՞րպէս լերինք, հովիտք, ծործորք
 Մերկացեալ զձոյլ սառին,
 Ընդ շունչ գարնան՝ ո՞րպէս և ձորք
 Գեղեցկանան դալարին:
 Ո՞րպէս ըղձայ այր շինական
 Քիւրաբեղուն լի՛ հնձոց.
 Կամ այգույն տէր՝ սիրտ ի բերան,
 Ո՞րպէս խաղողոյն կթոց:
 Ո՞րպէս նաւորդ հողմակոծեալ
 Անձկայ հողոյն հաստատուն.
 Ո՞րպէս նմա շող փայլակեալ
 Զոր հատանէ լուսատունն՝¹⁾
 Ո՞րպէս ստրուկ թոպեալ ի զանս
 Ո՞րպէս պարսի գրկութեան,
 Կամ բռնութեանն զոհ ի կապանս,
 Կապարատնին խորտակման:
 Պատիր սոքա են ուրուականք
 Առ անձկութեամք հրեշտակին.
 Զիք ի բնաւս, չիք օրինակ,
 Որպէս գրկաց նա կուսին,
 Զմուռս բռւրեն ստեանց պտկունք
 Յայն հոտոտի մեր քերուր.
 Ի շաղ կրծոց նորա պասուք՝
 Ո՛հ, բժշկի ի մի ումպ:
 Անդ և թակոյկը ճախրարակեայ
 Ժմտեալ նմա. գոգ ի խինդ,
 Անդ և սոսորդ ոչ ի բացեայ
 Երկի՞նք, տրոփէ սիրտն ի թինդ...
 Ի սարաւոյթ փրփրածնին
 Կրկնամահկին ընդ ակօս,
 Զըրանդեօք յաւէրժհարսին
 Քերի հրեշտակին փաղղոս...:
 Կալեալ զառու կրկին աղբեր՝
 Ռահ ցողահար, տայ մղօն,
 Եւ սողոսկեալ կոռուի ի վեր՝
 Մինչ ի Հայոց կոկիւսն...
 Յահեղ ծարաւն զլուր խնդրեալ,

1) Կամ առ ոչ գոլոյ ի լեզուիս, կամ առ մերոյ տղիտու-
 թեան՝ զայս բառ ունիմք յանգդիականէն—Lidhthouse լուսա-
 տուն: Խոստովանիմք, բառս այս տեսաւ ի կիր արկեալ որպէս
 «լուսատու աշտարակ», անշուշտ, ստոյգ թարգմանութիւն ի
 գերմանականէս—Leuchthausin: բայց անդդիականին համառօ-
 տութիւն՝ մանաւանդ սիրելի մերօց է ախորժակաց: Այլ ամե-
 նայն ոք զիւր կամս հաճեսցէ.

Եւ ջներ նմա՞ ընդ եղէ՝ գնն.
 Եւ ոռոգի այն ինչ հերկեալ
 Անդաստան ընդ երթեւեն. .
 Քամեալ զբաժակ սիրահոսան
 Իրրև զերկաթ ի մագնիտ
 Բնդարմացեալ մածնու հրեշտակն
 Ալյս է, գոչէ, իմ հանգիստու:

Ժ. ՔԵՐՈՂՆ - ՔԵՐԹՈՂ

Յորեան՝ ատոք ի հասկին,
 Մեզ ընձեռէ բնութիւն,
 Այլ ո՛ ի կալ ոչ կասու,
 Ո՛ զթեփ ոչ ընկենու:
 Մնան միշտ բնութեան
 Տուրք մշակութեան,
 Ուղւոյ եղեալ այր ոք այր,
 Ընդ բոխասէր առապար
 Ո՛չ զսատանն օ՞ն ի բաց,
 Եւ ռահ հորդեալ դիւրագնաց?
 Սոսկ ի մարդոյն մուրճ
 Ցարդարի կամուրջ:
 Ո՛չ հրեշտակն ցցասաց
 Պատկառ այդմ օրինաց,
 Զամենայն փակեալ բանայ.
 Զի որ զկնին նորա գայ.
 Ելցէ և մտցէ
 Եւ ճարտակ դտցէ?
 Եւ ահա կոյս հրաշաւոր,
 Ճոխս հեշտալեօք բիւրաւոր,
 Այլ զի գոհար մեծագնոյ,
 Ոչ շողայ թարց քերելոյ,
 Աժէք առ քերօղն
 Անուանեալ քերթող!

Քերի ակնն և թուշին
 Բեկորք մանունք ի գետին,
 Ճարտարին բարախէ սիրտ
 Բեկորք փային ի յակինթ...
 Երգի ի քնար
 ի վաղիւ դոհար:

Ժ. ՅԻՇԵԱԼ ԶԻՄ

Լուսաբերին յառաւօտել

Ընդ արշալուրշսն, ո դռւ կոյս,
 Ընդ արեուն արտափայլել
 Ընդ խրոխտ լերանց զագաթունս,
 Խջեալ ի դրախտ ընդ այդս այգոյն
 Թէ զսիրելիաւ փարիցիս,
 Յողջակէզ անդ հանել սիրոյն...
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Ի զով խաղաղ երեկոյին
 Թէ ընդ ծառով պարզիցիս,
 Նև զմայլեալ ի բոյր վարդին
 Յանոյշ ի զիրկ աղիսիցիս,
 Հնչեսցին քո հէգ պանդխտին
 Մըմունջք ի կոյս լսելիս,
 Յանդրանիկ հունձս այտից վարդին՝
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ ի ստուեր ուրեք յանկեան
 Զեռք հեշտախոյզք դգուեսցեն
 Զուլուցդ երկուորիս այժեման,
 Եւ ուլուց եղջիւրք ցցուեն,
 Ի կուսական ք գիրդ ագուռ
 Թէ փոխարէն ունիցիս
 Տէգ սիրամուխ, դարրնեալ ագուռ՝
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ սիրոյն հողմ ուռուցիկ
 Զքեզ արկցէ ի տապաստ
 Եւ նաւուղիղ քաջարաստիկ
 Զեռն ի սամիս կայ պատրաստ
 Նդ կայմին յոխորտ շոխնդ ահագին
 Եթէ որցեալ ցնցեսցիս,
 Զակունս ի վեր ուղեալ յերկին՝
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ ի բոյր սիրոյ կիզեալ
 Զրոյ կենդանւոյ ի խնդիր
 Վառիս, երթաւ զոտս ամբարձեալ
 Եւ խոյզ քո ոչ առաւիր.
 Զկենսատուն քաջ ընդգրկեալ
 Շըթամք ցնցուդ թէ յագչիս,
 Յարտավազկին ի վէտ խաղալ՝
 Ու, յիշեա զիս, յիշեա զիս:

ԺԲ ԿԻԿՈՐԻԿՈ՞ՇՈ՞Շ

«Կուտ, կուտ, կուտ, կուտ, կուտ»,
 Մարին կուտկուտաւ...
 — Ծիփ, ծիփ, ծիփ, ծիփ, ծիփ,
 Միփծիփիւմ նմա...

Մարին գայ և գդուի
 Սէր եռանդն յիս բորբոքի:
 «Գողացան զձուս,
 Ո' տայր ինձ որդիս,
 Մինչ ես գամ ի թուխս՝
 Յիս՝ որձակ քաղ, յիս».
 Ասէ և կուտկուտայ
 Եւ անդէն իսկ գառանայ:
 Mary, գէթ զերկուս
 Ունիմ ես զձուս,
 Եցէն քեղ հերիք
 Իմ այս երկուորիք.
 «O, yes, please. very good!..
 Ես ճեղն լիալ սորամուտ:
 «Կուտ, կուտ, կուտ, կուտ, կուղղղ».
 Մարին կուտկուտայ
 — Յուռթի լիցի նւղին
 Նրբեալ, ես ցնա:
 Եւ ի ձայն բարձր ազդոյ
 Հնչեմ զիմ կիկօփիկօ:

ԸՐԿԱԺՎ. ՆԱԽԱՑՈՐՆ

Ա.

«Yes love indelcod is light from heaven:=
 A spark of that immortal fire
 With angels shared, by Alla given,
 To light from, carthour, low. desire».
 Ryron. The glaour

Եւ ընդ ծառուն կենաց
 Ի սրովթից ամրավակ
 Նստէր Աղամ, և դիմաց
 Տեսիլ էր տիսրադիտակ,
 «Եւ հիմ, ասէ, ստեղծայ
 Առ ինչ այս դրախտ փափկութեան
 Առ ինչ հանուրց կացուցայ
 Էլո ի բնաւս տէր, իշխան:
 «Եւ զի՞ պիտին ինձ պսակը
 Լուսանորողք եթերին
 Քերովթէից յինչ բանակ
 Յինչ զօրութիւնք երկնային,
 Այն ինչ նաւակ մի փոքրիկ
 Որ ի կրծիս մակուկէ,
 Առ չունելոյ զանոյշ սիւք
 Առաջաստել չզօրէ»:

Ասաց, և աչք ցողեցին
 Յականողեաց մարդարիտ,
 Արտասուք էին նախկին՝
 Մարդոյն տխուր յայս հովիտ.
 Եւ սերովրէն որ հուպ կայր
 Նմա՝ ի թև իւր սրբեալ
 Զցող յաշաց, և գրգայր,
 Եւ զնովաւ սաւառնեալ,
 Եւ ի բարբառ նդեմայ
 Ընդ նախահօրն ի օսակցէք
 Այնմ երկինք են վկայ՝
 Սերովրէն ինչ ոչ ստէր:
 «Միսիթարեաց, տէր Սդամ,
 Թէ սրտի քում ոչ տուաւ
 Զոր սիւք ասես շարժական
 Զի Տէր զայն քեղ զացաւ
 Զի թէ ի սիրտ քո փշէր
 Զայն շունչ, այն, բոց հրոյ,
 Ապա կորուսեալ իսկ էր
 Քո զանդորրութիւն հոգւոյ,
 և յու յուրա թափէիր
 Զկիզելոյ կայծակունս
 Եւ կամ բնաւ ժուժայիր
 Յանձին տանել զցոլմունս,
 Եւ ում հոգալ իննամել
 Զքեզ, ընդունակ ուր էակն
 Զկայծականցդ ժողովել
 Զամպրոպ զշանթ և փայլակն»:
 Եւ զի՞ յումպէտս բաղրադայս
 Յօդես, ասէ նախահայրն
 Առ սերովրէն, յանզանց
 Բնաւ ունիս դու զմարդն:
 Ո՞չ տիեզերք դործ ձեռաց
 Էին հաստեալ յոր եղայ
 Կան առաջի իմ աչաց,
 Ո՞չ ինքնին իսկ և հովայ
 Զօրնանապազ ի դրախտիս
 Այգուն այգուն զգնայ,
 Ցողոյն եկեալ չուսառիս,
 Եւ չիցէ ինձ հերիք նա:
 Զարմանք ունին զիս ընդ քո
 Անհանճար բանս, սերովրէ.
 Հստ քեղ միթէ սիրտ մարդոյ
 Առ վսեմն գծս իցէ:
 Ո՞ կարիցեմ ես ի սէր
 զԱստուած սիրել վերհամբար՝,

Կամ զարարածս՝ զանվեհեր.
 Գործս նորա զմատանց.
 Զարև, լուսին և զաստեղս
 Զերեկոյ, զվաղորդայն,
 Զով և խաղաղ զգիշերս
 Զպայժառ լոյս տուունջեան:
 Զծառ, զբոյս և զտունկ,
 Մաղիկ քնքոյշ գեղանի,
 Զվարդ յեռեալ ճոխ ի թուփ,
 Շուշան յիւր ոճ զարնայնի:
 Ո՞չ զկենդանեաց խայտ երած
 Ո՞չ սոխակին զերգ անոյշ
 Յոր համօրէն խրախանան
 Բնութիւնք խոշոր և քնքոյշ:
 Տնւր նախ զսէր, զսրտի
 Լցո՞ իմ զամայութիւն,
 Տեսցես ուրեմն, սայթաքի՞
 Բնաւ մարդոյս բնութիւն:
 Ո՞չ վայրաբարչ ինչ կրից
 Զսիրա եղից ի թիրախ,
 Խսկ ընդէր բնաւ ժպտիս,
 Ուխտեմ ես ո՞չ՝ յուխտ խարդախ,
 «Փարդա» ստ, տէ՛ր իմ, քաւ, Աղամ,
 Կրկնէր անդրէն սերովքէն,
 «Մի՞ լիցի քեզ յաւիտեան
 Շնյել զայն օդ բոցելէն,
 Մի՞ լիցի քեզ տուայտի՝
 Կամաւ եղեալ անձնամատն
 Ի բոց հրոյ, և բերիլ
 Յոր ոչ բնաւ ուժէ մարդն:
 Ընդ հինգն ելանէ Աղամ
 Նւ առ սրովքէն բարբառի
 Ժպիտ ի դէմս առ վայրկեան
 Փայլեալ շողայ դժպի.
 —Որ ոչ մարդ է հողեղէն
 Զմարդոյն զիմրդ բնութիւն
 Դիտէ այդպէս սերովքէն,
 Նւ ուստի այս գիտութիւն:
 Խոստովանիմ, ո՞չ սակաւ
 Զարմանք ունին զիս ընդ բանս
 Նւ զի սրովքէ չեմ բնաւ,
 Ներեսցի՞ ոչ գիտել զայս:
 Տանէր սրովքէն թերութեան
 Առնն արույ կամակար,
 Զի Արարշին էր պատգամ
 Կամաց նորա կալ պատկառ.

Ուստի ոչինչ գժղմնեալ
 Ընդ դժուհի Աղամայ
 Թևապարէ սաւառնեալ
 Դարձեալ ժպտի և գրգայ:
 Այլ զի Աղամ ոչ ընդ խաղ
 Վշտանայր ինչ զափրոյ,
 Ուստի սրովբէն քուն խաղաղ
 Արկ զնովաւ ի վերջոյ.
 Եւ ի սղոխ զեփիւաին
 Թմրի Աղամ և ննջէ,
 Դրախտ զնովաւ սոխակին
 Ի դայլայլիկ գէթ հնչէ:
 Թևապարեալ սերովբէն
 Նդ աստեղց կաճառս սլանայր
 Եւ ընդ կամարն հրեղէն
 Անցեալ ճեպէր համբառնայր,
 Մինչ յԱթոռոցն ի սահման
 Ի քերութից պարառեալ
 Սրարշին կալ յանդիման,
 Եւ Տէր՝ յԱթոռսն վերօրհնեալ:
 Վեցթեւանն անդ երկոքումբք
 Քողեալ դդէմսն պակուցեալ,
 Զոտսն՝ ներքին այլ թեովք,
 Խոկ միջնովքն թռուցեալ,
 Ծխէ զմարդոյն արտասուս
 Տեառն ի հոտ անուշից,
 Հնչեն երկինք յալելուս
 Համակ զօրութեանց երկնից:
 Եւ հոտոտի Տէր ի խունկ,
 Զոր արկանէր սերովբէն,
 Բանին ականջք զգայունք
 Դնդ երկնից մաղթանս համօրէն,
 Եւ աղն՝ հաւակ էութեանց,
 Ի վայր յերկիր կարկառի,
 Եւ բարեխօսի ի շրթանց
 Զայս գէթ լսն, թէ ստացի:
 Սո'ւրբ, սո'ւրբ, սո'ւրբ ես, Տէր, Որ էն,
 Լի են երկինք փառօք քովք,
 Նուագս յօրինէ սերովբէն,
 Եւ մատուցեալ ունելեօք
 Առնու զկայժակն բողավառ
 Ի սեղանոյն ծխելոյ,
 Եւ ի յերկիր ի խոնարհ.
 Անդրէն լինի փոյթ ուղարոյ:
 Ոչինչ գիտէ մերս Աղամ
 Զի ի քուն կայ աակաւին

ՆԹԱՌ զի թօթափել ական
 Յառաջագրեալքս կատարին.
 Տակաւ զնովաւ կենաց ծառ.
 Արկեալ ի զով զիւր ստուեր,
 Ծնչոյն դիւրէր տուր և առ՝
 Եւ սերովքէն հասանէր:
 Եւ առ Աղամ մատուցեալ
 Կստի յահեկէ կուսէ
 Եւ զարտաշէկն փայլակեալ
 Ի նա մերձեցուցանէ,
 Միսի մարմնոյն փափուկ մորթ
 Եւ ճենճերի սիրտ անփորձ,
 Մառանայ ծուխ ընդ ուղղորդ
 Յերկինս ի վեր խառն ընդ բոց:
 Որ զԱղամաւն կենդանեաց
 Ընդ սոսկ տեսիլ կայծականն
 Շրտուցեալ երամակաց
 Առնուն, ասեն, սիրոյ զմասն,
 Եւ զկծեալ զոյգ ի զոյդ
 Ամոք խուսեն խայտացեալ
 Ի մենաւոր վայրս անքոյթ,
 Առ ինչ,—այդ չէ ասացեալ
 Յամբովկ հասեալ սերովքէն
 Գործոյն զոր գայր կատարել
 «Հա՛պա, վութա հմտօրէն
 Ի նուալիւղն լինել,
 Զի զարտիդ առաջաստ
 Սիրոյն եկց մըրիիկ
 Հուր, բոց տիեզերասաստ.
 Ապրեսցի քո մակուկիկ:
 Զայս սերովքէն ննջելոյն
 Կշուր այժմիկ Աղամայ
 Այլ նա տակաւ խոր ի քուն
 Եւ ո՛չ լսէ, ո՛չ զգայ:

Բ.

. The elements
 To mix 'd in him Nature might standup:
 And smy to all the world: This was a man:
 Thakspeare. Iul. Caesar. AX. s. 5.

Զի մի լիցի յերկարել
 Մեղ աստ ի բան չափածոյ,
 Եւ զի՞ ընդ վայր դանդաշել,
 Օ', ասացուք ի կարճոյ:
 Մարդն, յետ որոյ զգաց սէր,
 Գոչեաց եթէ մեռանիմ,
 Զի ոչ զոյ ինձ ոք ընկեր,

Եւ Տէր արար նմա կինո
 Խոկ թէ որպէս կամ զիմքոդ.
 Ո՞չ ուսուցանէ քեզ գիր.
 Թէ լիցէ քո լուսալ ցաըդ՝
 Հապա, կալ և ընթերցիր:
 Այլ զի ի սէր գէթ վերին
 Աղամ զնա սիրեսցէ,
 Եւ վայրակնեալ մեղկ ախտին.
 Ի կուտ զսիրա մի տացէ:
 «Ընդէր բնաւ ինձ պատուէր
 Կրկնի, ասէ նախահայր,
 Զէ իմ ուխտեալ միշտ ի սէր
 Վերին, ամենակատար.
 Սիրել զԱստուած և զոր ինչ
 Ի նորա կալաւ ձեռաց
 Սկրպճն գոլոյ, և ո՛չինչ
 Գոցի ուխտիս դիմակացց:
 Այլ սերովքն, որ գիտէր
 Մարդոյն սրտի զկազմած,
 Եւ ոչ բնաւ վրիպէր
 Բան ի նորա սուր աշաց,
 Ահարեկեալ ընդ երդումնն
 Զդողանի հարկանէր,
 Եւ առ Ադամ, զներումն
 Խնդրել երդմանցն ակնարկէր:
 «Ե՛րթ յետս իմ, սերովքէ
 Եւ զի բնաւ ոչ մեկնիս.
 Բան քո ըստ չափ ելանէ,
 Ոչինչ զգամ, համարիս:
 Միմիմ յիրս ձեր դասուն,
 Լուաւ յինէն ոք բան մի,
 Ընդ բարս ձեր անկայուն
 Ասել ինչ ունէիր:
 Այսպէս վերսաստէ Ադամ
 Խոժոռեալ ընդ զուարթունն,
 Եւ յայս անհամբոյը պատգամ
 Դառնայ սրովքն ընդ կրունկն,
 Արտօսը արկեալ և անդէն
 Թռչի ի բաց հեռանայ,
 Խոկ հարսնածուն լուսեղէն
 Ածէ առ Ադամ զիւայ:
 Այն ինչ յառեալ Ադամայ
 Ի ճակն ըստ իւրու ազգի
 Ծղիս ի ի վեր ամբառնայ
 Սիրախառնիլ և թռչի.
 Խոկ ի տեսիլ հեշտալեացն
 Բանդադուշեալ գլխովին,
 «Ոչինչ գտայց ուխտազանց,

Ասէ, առ ինչ տուաւ կին։
 Խմ ուխտեալ է չմեղկիլ
 Եւ յայս մնամ անդղորդ,
 Այլ ի սիրոյ վերջուանիլ
 Խոպառ, և կալ անհաղորդ,
 Օինչ ուրեմն ինձ տուան
 Սէր, կին, առ ինչ Տէր օրհնեաց,
 Օինչ ակնարկէ նորա բան,
 Թէ աճեցք»... և լոեաց։
 Աստ զնակատ յօրինեն
 Բնութիւն և հրաման անբուն,
 Ո՛ ելցէ յաղթ ի մարտէն
 Եւ ում տեղի ճակատուն,
 Ե՛ր երբեմն այս՝ ինդիր,
 Բնը ասել նաև կնճիռն
 Այլ գիտութիւն լուսակիր
 Բարձ վաղ ուրեմն զկրծիմն։
 Եւ որոց ոչն հաւասան
 Խոկութեան անշուք բանիս,
 Նօթճնմք, զի չեմք դրուժան,
 Աւասիկ զհաւասարիս։
 Ե՛ր, Է՛ր Աղամ ուխտաւոր,
 Մի զառածիլ մեղկութեամբ,
 Ուստի ըմպանկեալ յահուր
 Զիախրախտ ընթադրութեամբ,
 Զարկուցանէ զանշաղախն
 Ցորսայս անդէն առ ետեղը,
 Եւ ընդ գնեալ շնչոտ ընդ ակնն
 Նկրտի կոփել եղջերբ։
 Քաջարար վերելակեալ
 Ցընթադրեալն դրախտանուն,
 Ցագչի ոչ թերաքամեալ
 Եւ ընձուին դէմք քաջարւոլն։
 Մեղկութիւն ինչ իցէ այս,
 Կամ վայրահար կիրք պղտոր
 Վայելել զծեառն ընծայս
 Ցարի սէր սանձակուոր։
 Զընութեան ճմիցէ
 Ոք զկզակ ի պախուց
 Կամ զօրութեան դնիցէ
 Նորա դիմակ զիւր թոյլ կուրծ։
 Լու յինչ շարժի բնութիւն,
 Զինչ օրէնք, ով հեղինակ,
 Զիցէ ձոյլ յիմարութիւն
 Ցառնել նմա հակառակ։
 Որ յաւակնին զընութեան
 Բունազքօսել պաշտամունս՝
 Հընչտակն ասէ բարձր ի ձայն

Զայնալիսին խելակորոյս:
 Այլ և մեզ բան ի բերան
 Յամբովկ փութացեալ վիպիս
 Ոճով ասել զամենայն
 Զոր ինչ դիպեալ ամոլից:
 Դամ մի յերկրի՝ հարսն քոյր
 Եւ սրսկասպան խորանին
 Յանկարկատելի ցելոյր
 Ի պատառուածս, բեկանին
 Բոսորակիր և անօթք
 Մանունք, անտեսք, մազանման,
 Զէ ապաժոյժ այս արգեօք
 Նախկին հեղեալ, սրբազան:
 Թև ի թև հէտ կուսութիւնք
 Սուրան գլխն տագնապաւ
 Եւ լուր լինի դատակնիք.
 «Անմեղութիւն, Արթ բարեաւ.
 — Իսկ զինչ հարսն, իսկ զինչ քոյր.
 «Ո՛հ, ցնցէին մկանունք,
 Եւ խլրտէր և գելոյր
 Եւ շողային վառ աշկունք,
 Մերթ ի գիրկս կուսական
 Ճնշէր, պրկէր, մերթ թողոյր:
 Մերթ շօշափէր նա զԱղամ,
 Մերթ հինանայր մերթ ուռնոյր,
 Եւ թռչին ի սրտէն
 Թառանչք հեշտինք, և հոսէր
 Քիրտն ընդ կուրծս գետօրէնա...
 — Իսկ Աղամ. — «Ինչ ո՛չ կասէր,
 Էր երգեմն զի համբոյր
 Կնքէր կուսին ի շրթունս,
 Մերթ հատկլէր, զի ծփիւր,
 Ճնշեալ զվարդագեղ պտկունս՝
 Ուռուցելոց ըստ նռանց
 Ստեանց, ի փայլ ի գոյն ձեան,
 Կրծովք իւրով լուսազգեաց
 Եւ բա՛րէ երանութեանն
 Զի տարուբերս անդ, մարմաջ
 Հեշտին՝ անօթն ընտրութեան
 Զգայ... և ի մեղմ յոյժ աւաչ
 Վարդի արհին բալասան...
 Ամէն. եղև պատարագս
 Բնութեան ի հոտ անուշից,
 Եւ ամովք գտան արտաքս
 Ըստ գրգարանն հեշտալից,
 Յաշխարհ փշոց, ուր Եւայ
 Ցարդ իսկ ցաւօք ծնանի,
 Թէ և եկեալ Մեսիայ,
 — Իսկ Աղամ. — «տակաւ քրտնի»: